

ծածուկեան դեռ պիտի հանդիպինք յետոյ: Գալով ձեւին, թէ բնագրաց եւ թէ թարգմանութեանց մէջ անորոշ է այն: Բայց հին ըմպանակներն երեք հիմնական ձեւեր ունէին. խոր, տաշտածեւ կամ պատուանդանաւոր: Վերջին երկուքս պիտի տեսնենք ուրիշ անուանց ներքեւ. ուրեմն մեր «նուագին» պատկերն՝ հակառակ Հայկազեանի «նաշտկածեւ դաշխուրան» յարմարական բացատրութեան՝ որոնելու ենք առաջնոյն մէջ: Այս ինքն երկայնածեւ, վարէն դէպի վեր աստիճանաբար լայնացած, եւ տափարակ յատակով, ինչպէս կը տեսնենք հոովմէական սեղանի մը վրայ եւս (Գար. Ա, 1278). եւ կամ ստորին մասը գնդածեւ եւ վերինը բաժականման ու լայնաշուրթն՝ ասորականաց պէս (Վիգ. Բ, 1077). թէև մանրամասնութեանց մէջ մերը կրնար շեղիլ օտարներէն, պահելով անոնց ընդհանուր գծերը միայն: Սոյն սպասն է որ միջին դարուն «կրդայ» կը կոչուէր, եւ էր հասարակ ըմպանակ գինւոյ (Վաստ. 119, '20. Լծ. Պհ. Բ). ըստ որում դեռ գաւառաց մէջ կը պահէ նոյն անունն ու պարզ ձեւը՝ կանթերով հանդերձ:

Տաշտ: Նախորդին պէս քաջածանօթ դասական լեզուին մէջ, զոր միջին դարը պրս. բառով րաս ալ կը կոչէր (Հրց. 359):